

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-3-2-Ա

ք. Երևան

28.02.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի փետրվարի 28-ի նիստում քննարկեց 2022 թվականի հունվարի 13-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Բրիթիջ Ամերիքն Թբեքոու (Բրենդս) Ինք. ընկերության (251 Little Falls Drive, Suite 100, Wilmington DE 19808-1674, United States of America, US) «KENT CRYSTAL SILVER» (No20200825) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող՝ «CRYSTAL ԿՐԻՍՏԱԼ» («Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ, ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10 (AM), N-8745, 10.11.2004թ.) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող՝ «BOHEMIA Crystal» (Crystalex CZ, s.r.o. Masarykovo náměží 236/30 CZ110 00 Praha 1, Nové Město (CZ), IR-697686, 27.05.1998թ.) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 119.2-րդ, 120.2-րդ և 122.10-րդ կետերի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում հայտարկված բառային ապրանքային նշանի մաս կազմող

«CRYSTAL» բառը, որը ներառված է ավելի վաղ գրանցված համակցված ապրանքային նշանների մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալու մասին՝ «CRYSTAL SILVER» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելով, քանի որ «CRYSTAL SILVER» արտահայտությունը գույնի անվանում է և այն, որպես չպահպանվող տարր կարող է ներառվել ապրանքային նշանում, որտեղ գլխավոր տարբերակիչ հատկություն ունեցող տարրը «KENT» բառն է: Տվյալ դեպքում մերժված ապրանքային նշանը չի կարող դիտվել հակադրված նշաններին շփոթելու աստիճան նման ապրանքային նշան:

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ներկայացված փաստարկը հիմք կարող է դառնալ հայտարկված նշանի գրանցման համար և համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մասնակի բավարարել արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «KENT CRYSTAL SILVER» (No20200825) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ՝ «CRYSTAL SILVER» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ